# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգչային ծրագրային ապահովումների տարեկան արտոնագրերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 29.12.2025թ. N 572/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 14.01.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Հակոբյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Թ.Թովմասյանը, Ա.Մարգարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Հակոբյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

-«Միկրորինգ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա-33/63)

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ծառայության անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | պլանավորված ընդհանուր գին ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱՀ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «Միկրորինգ» ՍՊԸ | Համակարգչային ծրագրային ապահովում-1 | 2 083 300 | 20% | 2 499 960 | **2 500 000** |
| 1 | 2 | «Միկրորինգ» ՍՊԸ | Համակարգչային ծրագրային ապահովում-2 | 2 583 300 | 20% | 3 099 960 | **3 100 000** |
| - | 3 | - | Համակարգչային ծրագրային ապահովում-3 | - | - | - | **2 600 000** |
| 1 | 4 | «Միկրորինգ» ՍՊԸ | Համակարգչային ծրագրային ապահովում-4 | 1 500 000 | 20% | 1 800 000 | **1 800 000** |
| 1 | 5 | «Միկրորինգ» ՍՊԸ | Համակարգչային ծրագրային ապահովում-5 | 496 685 | 20% | 596 022 | **596 025** |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

**5. Հանձնաժողովը որոշեց՝**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Միկրորինգ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից հայտով 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-«Միկրորինգ» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժիններով ճանաչել ընտրված մասնակից:

3. Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Միկրորինգ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Միկրորինգ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

4. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի 3-րդ չափաբաժինը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Հակոբյան

Անդամներ՝ Թ.Թովմասյան

Ա.Մարգարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան